*Ե Ղ Ե Լ Ո Ի Թ Յ Ո Ի Ն*

# ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ ՎԵՐԱԴԱՐՁԱ ԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Այն, ինչի մասին ուզում եմ պատմել, շատերին անիրական, ֆանտաստիկ կթվա: Ինքս էլ, միգուցե, այնքան էլ չհավատայի, եթե լսեի մեկ ուրիշից, քանզի, կարծում էի, անհավանական է լինել Արարչի մոտ և այնուհետ վերադառնալ Երկիր:

2006 թ. նոյեմբերի 9-ը կարծես թե ոչնչով չէր տարբերվում մյուս օրերից: Սուրբ Գայանե եկեղեցում, որի վանահայրն եմ, օրվա ծառայությունները կատարելուց հետո, ժամը 18.30-ի սահմաններում, իմ մեքենայով ուղևորվեցի դեպի Երևան. մի քանի օր առաջ պայմանավորվածություն ունեի՝ համապատասխան գրքեր վերցնելու՝ իմ վարդապետական ատենախոսությունը գրելու համար:

Մեքենան արագ վարելու սովորություն երբևէ չեմ ունեցել. կարծում եմ, այդ օրն էլ չեմ գերազանցել արագությունը: Երևի թե հոգնածությանս գումարվել էր աշնանային մռայլ մթնշաղը, այդ պատճառով կոպերս ծանրանում էին ու մերթընդմերթ փակվում (միգուցե սրանք դատարկ պատճառաբանություններ են, և ամեն ինչ որոշված էր ի վերուստ): Մուսալեռի կամարն անցնելուց հետո չնկատեցի շրջադարձ կատարել պատրաստվող հսկա բեռնատարը, և տեղի ունեցավ սարսափելի վթարը:

Ականատեսների վկայությամբ՝ իմ ջախջախված մեքենային նայելով՝ ոչ ոք չէր ասի, թե վարորդը ողջ է մնացել: Ուշքի գալուց հետո, ամիսներ անց, պիտի հիշեմ, որ վթարի պահին կարծես անհերևույթ մի ուժ ետ քաշեց իմ նստատեղը և կոտրեց:

Այն դժոխային տվայտանքները, որ ապրել են իմ հարազատները և հատկապես ծնողներս, մինչև հիմա դրոշմված են նրանց աչքերում, քանի որ ո՛չ Էջմիածնի հիվանդանոցում և ո՛չ էլ Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում բժիշկներից ոչ ոք հույսի նշույլ անգամ չի ունեցել, թե ես կյանք կվերադառնամ:

Ինձ հիվանդանոց տեղափոխելուց երկու ժամ անց հիվանդանոց եկավ նաև Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վերակենդանացման բաժանմունքի ղեկավարի հետ կարճ առանձնազրույց ունենալուց հետո Նորին Սրբությունը հուզված դուրս է եկել և ասել. «Մեզ մնում է աղոթել առ Աստված, որ Նա կյանք պարգևի Հայր Սուրբին»:

Համոզված եմ, որ ծնողներիս, Վեհափառի և իմ եղբայր հոգևորականների, իմ մյուս քույրերի ու եղբայրների աղոթքներն էին, որ բարեխոս եղան Հայր Աստծու մոտ:

22 օր «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում անգիտակից վիճակում մնալուց հետո, 23-րդ օրվա կեսին, աչքերս բացեցի և առաջինն ավագ եղբորս տեսա, որն այդ ողջ ընթացքում գիշեր ու զօր պահապան հրեշտակի նման եղել էր կողքիս:

Այդ սարսափելի դեպքից արդեն ամիսներ են անցել: Օր օրի, կաթիլ-կաթիլ, Աստծո օրհնությամբ, ծնողներիս ու բժիշկների օգնությամբ վերագտնում եմ կորցրած ուժերս: Կարծում եմ, հեռու չէ այն օրը, երբ ի զորու կլինեմ շարունակել իմ առաքելությունը...

Իսկ այժմ թույլ տվեք անցնել այս պատմության ամենակարևոր հատվածին:

***

Վթարից անմիջապես հետո ես կարծես տեղափոխվեցի մի ուրիշ աշխարհ: Քաղցր նինջը պատեց աչքերս, և ես սկսեցի բարձրանալ: Մարդկային լեզուն ի զորու չէ նկարագրել իմ տեսած գեղեցկությունը: Անծայրածիր կանաչ տարածություններ՝ ծաղկազարդ ու խնկաբույր: Այդ վայրը թվում էր այնքան սքանչելի, որ կարող էի մի հավիտենականություն անհոգ ապրել:

Այս դրախտային վայրում մի մեծ ու գեղեցիկ տուն կար: Ներս մտնելով՝ տեսա մի սպիտակամորուս, փառահեղ ծերունու, որն ինձ ընդառաջ էր գալիս: Ես անմիջապես հասկացա, որ ինձ մեծ բախտ է վիճակվել սեփական աչքով տեսնել ՆՐԱՆ՝ տիեզերքը Արարողին, մեր բոլորի Հայր Աստծուն: Ողջունելուց հետո ինձ ծանոթացրին տան պայմաններին: Այստեղ ինձ հյուրասիրեցին երկնային ուտելիքներով՝ սուրբ հացով և փլավով: Ինձ համար ամենազարմանալին այն էր, որ այնտեղ կար ինչ-որ մի հսկա իր, որը ցույց էր տալիս, թե ի՛նչ է կատարվում Երկրում: Այս հիասքանչ վայրում շատ մարդիկ կային: Մարդկանց հոգիներում տիրում էր խաղաղություն և անհոգություն: Նրանց մեջ ես ճանաչեցի մեր հարևանուհիներից մեկին (որը, ինչպես հետագայում իմացա, մահացել էր իմ՝ վթարի ենթարկվելուց մի քանի օր անց): Այն, ինչ կատարվում էր այս դրախտային վայրում, պարզապես հրաշք էր: Այստեղ կարծես չկար ժամանակ, համենայն դեպս, ես այն չեմ զգացել: Ինքս ինձ զգում էի հավիտենականության և երանության գրկում: Ամեն ինչ անեղծ ու անբասիր էր, հետաքրքիր, հիասքանչ: Մեզ տեղեկացնում էին ամեն բանի մասին. մենք տեսնում էինք ամեն ինչ:

Միառժամանակ հետո սպիտակափառ ծերունին՝ Ինքը Հայր Աստված, կանչեց ինձ և ասաց, որ պետք է վերադառնամ Երկիր՝ ծնողներիս և ինձ սպասող մյուս մարդկանց մոտ: «Ես քեզ ետ եմ ուղարկում Երկիր,- ասաց նա,- հորդ ու մորդ մոտ, և քեզ տեսնելով՝ շատ անհավատներ, շատ մոլորյալներ դարձի են գալու և հավատալու են Ինձ»:

Ես ասացի, որ չեմ կարող վերադառնալ, քանի որ ետդարձի ճանապարհը չգիտեմ: Նա մի հրեշտակի կարգադրեց ուղեկցել ինձ:

Վայրէջքը նույնքան հուզիչ էր, որքան վերելքը: Իջնելիս աչքս ընկավ խոր գետնախորշերի, որտեղից մարդկային սրտակեղեք ձայներ էին լսվում: Այդ չարագուշակ փոսերում ես տեսա հսկայագլուխ շների (կարծեմ Գերբեր էին անվանում): Այդ գազանների երախն այնքան մեծ էր, որ մարդ առանց դժվարության կարող էր մտնել այնտեղ ու դուրս գալ: Հրեշտակն ասաց, որ դրանց մոտ գցում են չար մարդկանց:

Քիչ անց հրեշտակն այլևս ինձ հետ չէր:

Ետդարձս կատարված էր: Ես Երկրի վրա էի՝ շրջապատված ինձ հարազատ մարդկանցով:

*Տ. ՄԱՄԲՐԵ ԱԲԵՂԱ ՏԱՇՉՅԱՆ*